

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ժր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ժր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Ժրար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Բ Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՋՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՅԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեն տրուիր

ՋՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՋԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

Պաշտօնական ազդերու տղը (25 sum)
10 սանդիւն:
Անհատական ազդերու տղը (25 sum)
20 սանդիւն:
Երեք անգամ տեղի հաւար 20 0/0
գեղջ:
Փոխարեւոր դրամ կամ անհատական
դրոշմ դրկն կանխիկ:

ՕՏԱՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Մեր նախորդ թիւով արտա-
տպեցինք լուծական մեմորէն նմոշ
մը որ օտար մարդորսներու անձ-
նատուր եղողներու ուղղուած կըլ-
տա Լաւից խրատ մըն էր, հիմ-
նուած Տ. Եօաքիմ Պատրիարքի
չըլաբերականին վրայ: Յոյն
բարձրաստիճան եկեղեցականներուն
մէջ էն աւելի սիրուած ու համայն
Արեւելքի քրիստոնեաներէն յար-
գուած անձնաւորութիւնն է Տ.
Եօաքիմ Պատրիարք որ իր չըլա-
բերականով կը զգուշացնէր բոլոր
լուծադաւանները Եւրոպայէ եկող
կրօնական քրօքականութիւններու
չը յանձնել իրենց զաւակաց դաս-
տիարակութեան էն փափուկ գոր-
ծը:

Ազգային իրաւանց և նուիրա-
կան աւանդութեանց պաշտպանու-
թեանը նախանձախնդիր, աննկուն
կամքի տէր և անվեհեր հայ անպիս-
կոպտս մըն ալ, Մանկունին, Մի-
ջադիւղի եկեղեցւոյ բեմէն խրա-
տեց հայ ժողովուրդը հետեւել
յոյն պատրիարքի այդ յորդո-
րին:

Հայ և յոյն երկու հասարակու-
թեանց կողմէ առաւելագոյն սիրուած
ու յարգուած այդ երկու եկեղեցա-
կանները միայն չեն որ այդ խրատը
կուտան իրենց ժողովուրդին: Եթէ
միայն անոնք ըլլային, կասկած
կրնայինք ունենալ թէ սին կրօ-
նամուրթնէն դրդեալ են. այդ
խրատը և օրինակը բուն իսկ էն
քաղաքակրթեալ ազգերէ Ֆրան-
սայէ, Զուիցերիայէ և Սպանիայէ
կը բղխէ: Այսօր Ֆրանսացին է որ

իր ազգին և իր դաւանանքին
պատկանող կրօնաւոր դաստիարակ-
ները ու դաստիարակուհիները խա-
րազան ի ձեռին նոյնիսկ երկրէն
գուրս կը վռնտէ, կը փակէ, կը
քանդէ անոնց վարժարանները: ո-
րովհետեւ դարուս ոգւոյն և պա-
հանջին հակառակ կը գտնէ անոնց
դաստիարակութեան միատիքական
եղանակը, մտքերու խամրոցներ կը
նկատէ այդ կրօնականաց կրթա-
րան անունին տակ հիմնած հաս-
տատութիւնները, ուր մատուց ման-
կիկին միտքը աւելի կրօնական
անբարենկի, մութ և հակաբնա-
կան վարդապետութիւններու լա-
բիրինդոս մը կը դառնայ և ան-
ընդունակ կըլլայ դրական ու գի-
տական ճշմարտութիւններ մարսե-
լու և անկախ ու անկաշխանդ նկա-
րագիր շինելու:

Երբ բարձր քաղաքակրթու-
թեամբ օժտուած ազգեր այլեւս
չեն հանդուրժիր իրենց զաւակ-
ները իրենց ազգակից ու դաւա-
նակից Բեռներու ու Սեռներու յան-
նել, ո՞րչափ աւելի մենք զգուշա-
նալ պարտինք մեր պղտիկներու
նախնական դաստիարակութիւնը
անոնց վստահել:

Այդ քաղաքակրթեալ ազգերը
միայն մտքի և զարգացումի տե-
սակէտով իրենց զաւակներու դաս-
տիարակութեան փնտաւար կը
գտնեն Բեռներու և Սեռներու վար-
ժարանները: Իսկ մեզ՝ այս տեսա-
կէտէն զատ, կրօնական և ազգա-
յին կրկին տեսակէտներով ալ փն-
տաւար է, կործանարար է անոնց
ստուած նախնական դաստիարակու-
թիւնը: Այս ակնյայտնի ճշմար-
տութիւնը բացատրելու պէտք չը
կայ կարծեմ, միայն երկու օրի-
նակ կը բաւէ զայն հաստատե-
լու:

Անցեալ տարի պուլկարահայ
վարժարան մը այցելած ըլլալով,
Տնօրէնին հարցուցի թէ ֆրանսե-
րէնը ո՞վ կը դաստիարակէ. «Ֆրան-
սացի օրիորդ մը» պատասխանե-
ցին ինձ: Հետաքրքիր եղայ իմա-
նալու թէ ո՞ր օրիորդն է: Յոյց
տուին: Զարմանքս մեծ եղաւ երբ
տեսայ թէ այդ ինքզինք ֆրան-
սուհի կոչողը ինձ ծանօթ հայ

պապական ընտանիքի մը աղջկն
է, որուն եղբայրը կամ մօրքեռոր-
դին՝ զոր շատ լաւ կը ճանչնամ, հայ
նախակրթարանի մէջ դաստիարակ-
ուած կատարեալ հայ մըն է: Իսկ
ինքը Սեռներու վարժարան յաճա-
խած լինելուն շնորհիւ ինքզինք
ֆրանսուհի կանուանէ եղբր և այն-
պէս ալ կլեցնել կուտայ զինք չը
ճանչցողներուն: Հայերէն բնաւ չը
գիտնալ կը ձեւացնէ միշտ, սովո-
րաբար օտարներու հետ կը տես-
նուի ու կարելի եղածին չափ հայ
չըլանակներէ հեռու ապրել կը սի-
րէ, սակայն օտար երիտասարդի
մը սիրտը կարենալ գրաւելու չափ
առաւելութիւն մըն ալ առանց ու-
նենալու:

Ուրիշ պուլկարահայ օրիորդ մըն
ալ կը ճանչնամ, որ առանց հայ
վարժարան յաճախելու իր նախ-
նական և երկրորդական կրթու-
թիւնը պուլկար վարժարաններու
մէջ ստացած ըլլալուն շնորհիւ
դադրած է թէ՛ հայերով և թէ՛
հայուլթիւնով հետաքրքրուել: Ի-
րենց տունը այցելող հայ հիւրերէ
խոյս կուտայ և միշտ պուլկարու-
հիներու հետ իր ժամերը կանցնէ:
այս ալ սոցա-տիկական ֆրանսուհիին
իման գրաւիչ ձիրքերով չը փայ-
լիր:

Զարմանալի է սս այնպէս չէ՛,
Սակայն իրողութիւն մըն է և
այս կարգի իրողութիւններ տասն-
եակներով կարելի է ցոյց տալ:

Նաեւ շատ սխալ է կարծել թէ՛
իր մայրենի լեզուին մէջ ընտելա-
նալէ առաջ օտար վարժարաններ
յաճախող մեր զաւակները՝ լաւ
ուսեալներ կըլլան, ընդհակառակը,
մենք կլնանք հաստատել թէ այդ-
պէս ընողները անկատար մնացած
են նոյնիսկ ֆրանսերէնի կամ պուլ-
կարերէնի մէջ ալ, կը ճանչ-
նամ այդ կերպով պուլկար
ժիմնադիրներ աւարտող շատ հայ
երիտասարդներ, որոնք 8-10 տողէ
բաղկացեալ բան մը չեն կարող
չնորհքով խմբագրել, և շատ ան-
գամ ծիծաղելի կըլլան:

Ուստի կը պնդենք և կը հաստա-
տենք թէ մեր վարժարանները մեր
զաւակաց դաստիարակութեան էն
օգտակար հաստատութիւններն են

—Եթէ զանոնք քիւ մը բարեկար-
գենք—ուր նախակրթուելէ յետոյ
միայն օտար բարձրագոյն վարժա-
րաններ պէտք է դիմեն:

ԳՈՒՐՊԷԹ

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՉ, 20 Սեպտեմբեր

Թրքական Կորսէր

Կ. ՊՈԼԻՍ, 14 Սեպտեմբեր. — (Էսթ-
Ուէսթի յատուկ թղթակցէն):

Գաղտնի ոստիկանութեան պետը՝
Հաճի Մէհմէտ էֆէնտի, իր լրտես-
ներէ մէկէն իմանալով որ Ալպանիա-
ցիք ալ այս միջոցիս լաւ տրամադ-
րուած չեն դէպի Ապտիւլ Համիտը,
այս լուրը անմիջապէս հաղորդեց Սուլ-
թանին:

Սուլթանն որ արդէն անել դրու-
թեան մը մէջ կը գտնուէր Մակեդոնա-
կան խնդրով, որոշած է Ալպանացւոց
զրուլթիւնը բարեօրէն («») ասոր հա-
մար հրամայեց անմիջապէս տեղափո-
խել Ալպանիայի կառավարիչը պաշ-
ուէր զրկուեցաւ: Նաեւ հարկահանուի-
րուն յետ այսօրիկ աւելի քաղաքավա-
րութեամբ («») վարուիլ Ալպանա-
ցիներու հետ, դադարեցնել ամենայն
խտուութիւն: Մէկ խօսքով, առայժմ
Ալպանացւոց խաթրին չը գպչիլ: Կը-
ուի թէ այս որոշումները հաղորդուե-
լով Ալպանական ժողովուրդներուն,
անոնց վատ տրամադրութիւնը փոխ-
ուեր է եւ նուազեր անոնց զայրոյթը:

— Սուլթանն իրատէսով մը արձակեց
40,000 պահեստի զօրքեր, որոնք
գրուի տակ կանչուած էին Մակեդո-
նական զօրիթէի պուլկար խմբերը
ջնջելու համար: Ապտիւլ Համիտ այս
կարգադրութիւնն ըրաւ երբ պաշտօ-
նապէս պուլկար կառավարութեան
կողմէն իրեն հաղորդուեցաւ եւ ապա-
հովցուեցաւ թէ իրօք Ֆէրիտիանտ իշ-
խանը յետ այսօրիկ ամէն ջանք պիտի
ընէ Մակեդոնական շարժումը չէզո-
քացնելու եւ ամէն պարագայի մէջ
պիտի ընդդիմանայ Մակեդոնիոյ մէջ
կատարուած ուրիշ ապստամբութեան:

— Քանի մը օր առաջ Սուլթանի
փեսայ՝ Տամատ Մահմուտ փաշայի ազ-
գականներէն մին (քրոջը որդին) ան-
հետացան շնորհիւ Սուլթանի հաւա-
տարիմ ծառայներուն (իմա լրտեսնե-
րուն): Այդ երիտասարդը՝ Հաճի Սատի
էֆէնտի ամբաստանուած է իբր թէ
վտանգաւոր թղթեր եւ նամակներ
ուրի եղեր իր քովը, եւ իրօք գաղտնի
ոստիկանութիւնը նոյն անձնաւորու-
թեան տունը խուզարկելով մի քանի

ՊՈՒՐԿԱԶ ՎԱՐՁԱՐԱՆ ՄԸ ԳՆՈՒԱԾ

Պուրկազի Պատ. Թաղ. Խորհուրդը կը խնդրէ հետեւեալի հրատարակութիւնը.

Պուրկազի Պարտուց Բարձման Բանձնաժողովը ներկայիս կը յայտարարէ թէ՝ տեղ. հայ եկեղեցւոյն ճիշդ գէմը, ութ սենեակով երկյարկ տուն մը գնած է 6,600 Փրանքի, որուն 3,000 Փրանքը այսօր վճարուած է մաս մը հանդանոցի թեմաք և մաս մըն ալ ալ միջոցներով. որոնք մանրամասնօրէն իտի հրատարակութիւն մօտաւորապէս տեղական ազգային թերթերու մէջ:

Գնուած վերոյիշեալ շէնքը ազգային վարժարանի պիտի յաւանդուի, մնացեալ 3,600 Փրանք պարտքի վճարուածէ և ազգը այդ շէնքին վերջնականապէս տիրանալէն ետքը:

Արդ՝ Եսանձնաժողովս որոշած է մնացեալ 3,600 Փրանք պարտքին հատուցման համար, ժապարհեալ տոմարով մը հաճանակութեան ձեռնարկել Պուրկառահայ կարեւոր քաղաքներու մէջ, յուսալով որ բարեւեր ազգայինք իրենց նուէրներով պիտի քաջալերեն այս կըրթաւէր ձեռնարկը ու այսպէսով շնորհապարտ պիտի թողուն Պուրկազի հայուկիւնը և մանաւանդ աղքատիկ երկսեռ ուսանող մանկերուն:

Ի դիմաց Պարտուց Բարձման Բանձնաժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Ե. Գ. Թորիկեան Մարտիկ Մուրեան
Պուրկազ, 10 Սեպտեմբեր 1902

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բաղէշէ նամակներ կը տեղան Պատրիարքարան, խնդրելով որ նորընտիր Առաջնորդը օր առաջ իր պաշտօնին գլուխը անցնի. տեղւոյն գործերը երեսի վրայ կը մնան, աւելի ճիշդը Բաղէշի խեղճ Հայերը Գիւրտերու և կառավարութեան հարստահարութիւններուն դէմ պաշտպան մը կը փնտրեն, առանց որոյ իրենց կացութիւնը այլեւս անտանելի է:

— Աֆիոն Գարահիսարի քահանայները և Թաղ. Խորհուրդը հըրկիւնց արգահատելի վիճակը մէջ բերելով նպաստ խնդրած են Պատրիարքարանէ:

— Արմաշի Դպրեվանքի ժառանգաւորաց Դպրոցին շրջանաւարտ կարգէն հինգ երիտասարդներ միայն վարձապետ ձեռնադրուելու զին: Իսկ միւս 18 շրջանաւարտները կուսակցութիւնէ խոյս տալով քահանայ կամ վարժապետ ըլլալ կը փափաքին:

— Կովկասէ հայրենիք վերադարձող հայ գաղթականներու ի նպաստ հանգանակութեան ձեռնարկուած է Մոսկուայի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ և առաջին օրը 180 թուալի հաւաքուած:

— Պագուի մէջ Հայ մը և վրացի մը սպանուելու են իրենց կիներէն:

— Չարսէ Տփղիսի թերթերուն հետեւեալը գրուած է.

«Գաղթականները վերադառնում են հայրենիք: Խուժք խուժք գնում են դէպի սահմանագիծ: Կարիքը մեծ է, օգնութիւն է հարկաւոր: Նպաստել պէտք է մանաւանդ սահմանագիծից այն կողմը:

«Կազմուած նպաստամատոյց խում.

բը թէեւ, որքան կարող է, աշխատում է՝ բայց նպաստը այնքան քիչ է հաւաքուած, որ չէ կարող բաւականութիւն տալ: Մեր օտարազաւան հայ եղբայրները համարեալ թէ ոչնչով չեն նպաստում:

«Տեղիս երիտասարդութիւնը, որ անմիտ գաւառականների համար բուրքներ է փչացնում, խիստ անտարբեր է: Էլի չէն մնայ հայ ժողովուրդը: որչափ որ կարող է նպաստել, նպաստում է միշտ: Նա չէ խնայում իր լուծան: Գաղթականները վերադառնում են ի յոյսերով: ապագան ոգեւորում է նրանց:

«Բայց ինչպէս պէտք է տեղ հասնին: Եւտով այս կողմերում աշուր կսկսի և ցրտեր կը լինին: Ինչ պիտի ունէ գաղթականը: Իսկ եթէ սահմանագիծից յետ վերադարձնեն խեղճերին, այն ժամանակ ինչ կլինի նրանց դրութիւնը: Լսում ենք, որ ինչպատք գաղթականների մի երեկոյթ պիտի կազմուի»:

— Գերմանիոյ Ռայխստակի անգամներէն Տ. Էտուարտ Պերնը. տայն հրատարակած է «Հայ ժողովուրդի առնչութիւնները և Եւրոպայի պարտականութիւնները» անունով գիրք մը: Հեղինակը կուսակցական սիրէ հայերը ու հայկական խնդիրը: գովեստով կը խօսի մեր վրայ ու կըսէ «Գերմանիան պարտաւոր է այս ժողովուրդին օգնել: Դաշնագիրը Գերմանիոյ մայրաքաղաքին մէջ ստորագրուեցաւ, ուստի Գերմանիան կոչուած է հսկելու Հայերուն համար դաշնագրով պահանջուած պաշտպանութեան միջոցներուն իրականացման: Գերմանիոյ արտաքին յարաբերութեան շահերը չեն խանգարուիր երբ նա իր

պարտականութիւնը կատարէ: Հայերուն օգնելու համար գործին նախաձեռնարկ ըլլալ հարկ չէ: Կը բաւէ միայն որ Գերմանիան միւս պետութիւններէ առաջարկուած պայմաններուն—թուրքիոյ վրայ ճնշում բանեցնելու համար—ընդդէմանալէ քաշուի, որով Սուլթանի դիմադրութիւնն ալ կը բեկանի: Այսօր Սուլթանը աւելի Գերմանիոյ պէտք ունի, քան թէ Գերմանիան Սուլթանին»:

Ուրախանալի է որ գերման եւրեւփոխանք եւս սկսած են մեզ ի նպաստ իրենց կառավարութեան դէմ բողոքել և հանրային կարծիքը պատրաստել հայասէր հրատարակութիւններով:

ԾԱՆՈՒ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, և հակառակ գնոյն աժանութեանը կը պարունակէ ազգային հին ու նոր խիստ շատ երգեր: Գին 1 Ֆր.

ՆԷՏԱ ԿԱՄ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՄԸ, Պուրկազիոյ աղատութեան առաջ Պուրկազ գիւղացիին Թուրքերէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Ծառ հետաքրքրական: Գին 50 ՍԱՆԹ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Դ. Նանապետեան: Զեղչեալ Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար պէտք է գրել իրանոյի խմբագրութեան, բոսթի ծախքը 10ական սանթիմ միատեղ լրկելով: Իսկ գիրքերու արժէքին համար, եթէ ուրիշ դիւրութիւններ պակսին, կընդունուի նամակագրօջմ 10 0/0 զեղչով:

ուսուցիչ մը կար, որուն անձնութիւնը վանականէն իմացած էր:

Ներսէս Արծրունին ուղղակի վարժարանը գնաց: Ուսուցիչը, որ երեսունն անցած, բարձրասակ, ոսկրուտ, յաղթանդամ ու ծաղկաւերկրապարտով անձ մըն էր, շատ սիրով ընդունեց զինքը:

— Լսած եմ ձեր անունը, նկատեց տուաւ Ներսէս Արծրունին՝ ծանր ու խանդավառ ձայնով մը, հետեւաբար կը վստահիմ յայտնելու թէ անկախութեան զինուորներէն եմ ես:

— Ո՛հ, ուրեմն բարեբաղդ եմ ձեզ տեսնելու, մրմնջեց ուսուցիչը՝ յուզուած բայց գորովալի չէտով մը: Արեօք քաղաքէն կուգաք:

— Ո՛հ, Պարսկաստանէն կը վերադառնամ եւ նպատակս է անգամ մը քաղաքը մտնել: Չեմ գիտեր թէ ոտիկաններու հսկողութիւնը ո՞ր աստիճանի հասած է:

— Կեցէ՛ք... առային անգամն է որ վան կը մտնէք:

— Ե՛ս:

— Այո՛:

— Ո՛հ, բարեկամս, արդէն բնիկ քաղաքացի եմ:

— Ուրեմն կասկածնիւ բան մը չունիք: Ծառոնց է որ հեռացած էք:

— Է՛ս... տասն եւ ինը տարի կայ:

— Տասն եւ ինը տարի:

— Այո՛: Բնական է՝ անկից ի վեր բաւական փոփոխութիւններ կրած է, այնպէս չէ՞:

— Ի՛նչ կըսէք... եթէ այսօր Հայկայ վանքի արուարձանէն մինչեւ Արարուց նոր կարուցուած եկե-

ղեցին երթաք, ո՛չ փողոցները պիտի ճանչէք եւ ո՛չ ալ շէնքերը: Մանաւանդ, վերջին անգամի հըրդեհէն ետքը, քոլոր շուկան կերպարանափոխ եղած է:

— Ժողովուրդին տրամադրութիւնն ինչպէ՞ս է:

— Ժողովուրդին տրամադրութիւնը լարուած է: Ներքին ուժը բաւական յառաջ կերթայ, եթէ գաղտնի կերպով շարունակուի եւ տեղի չտայ պայթելու ու յուսկետս վատնելու: Կառավարութիւնը համոզուած ըլլալով հանգերձ թէ հայերու գիրքը վտանգաւոր կը դառնայ, դարձեալ ստիպուած է լուռ մնալ:

— Գեղերու կազմակերպութիւնն ինչ վիճակի մէջ է:

— Հայոց ձորի գեղերը մեծաւ մասամբ Գուրտ տարրերէ բաղկացած են, հետեւաբար աւելի ճշնշուած է կազմակերպութեան ոգին: Իսկ Թիմարայ գեղերը լուս պատրաստուած են: Այսօր միայն զէնքը կը պակսի...

Ներսէս Արծրունին պահ մը իր ճաղատ ճակտին վրայ զբաւ ձեռքը, մտածեց երկա՛ր ու խորի՛ն զառնութեամբ, եւ յետոյ հայրենասէր ուսուցիչի աչքերուն մէջ նայելով մրմնջեց.

— «Միայն զէնքը կը պակսի» ըսիք, բարեկամս, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Այդ պակասը լեցունելու համար ի՞նչ պէտք է:

— Ըստիս, վարչական բարձրագոյն մարմին մը պէ՛տք է, որ ընդհանուր ազգին հաւանութեամբ կարգուած ըլլայ:

— Իրաւունք ունիք: Բայց ներկայ հանգամանք-

ներու մէջ շատ զժուար է ընդհանուր ազգին հաւանութեամբ բարձրագոյն մարմին մը նշանակել, որովհետեւ խռովքի մը ներքեւ ծածկուած թշնամին մեր գէմը պիտի հանենք ու ատանկով կարելի է վիժելու կը դատապարտենք ապագայ ծրագիրը:

— Ա՛խ, այո՛... ամենէ՛ն աւելի մտածելու կէտն այդ է: Քանի որ մեր թշնամին օձի շապիկի մը մէջ փաթթուած կը սպասէ, մեզի կը մնայ գաղտնի կերպով պատրաստուիլ: Ասիկա ամենուս պաշտելի եղող անձնութեան վանականին գաղափարն էր...

Տժգոյն ու սարսափի ստուեր մը անցաւ Ներսէս Արծրունիին կերպարանքէն ու ակամայ շարժում մը ըրաւ:

— Կը ճանչէ՞ք վանականը, ընդհանրեց Ներսէս Արծրունին:

— Ինչպէ՞ս չէ՞... մեր նահանգին հրեշտակն է ան:

— Գիտէ՞ք թէ ու՞ր է:

— Չեմ գիտեր... մրմնջեց ուսուցիչը:

— Միթէ՞ չիմացաք անոր մահուան դատապարտուիլը:

— Իմացայ... բայց այդ վճիռը չգործադրուեցաւ... վանի եղեռնադատ ատենը Կ. Պոլիս զրկեց զինքը:

(Շարունակելի)

Ապօնէիներէն զիս պիտի
քէնիս կազմէս պէտէիսն կեօն.
տէրմէնիսն րէնս օրնսնսն :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Ի թալիս տէրմէնիսն թրա-
պօնս զիսն թիսն տէ ի թալիս
մուհաճիւրէն իսքեան ի թալիս
էմլաք սաթըն ալմազ կիպի պիր
թազըմ թէքիթիւրի հալի պիր
պէյաննամէ Պապը Ալիյէ թազ-
տիմ ի թալիս օլտըղը եազըմը
Ալիյէն պու հալմաթիս թէքիթիւ
օլտըղիս. զիրա էնէպի թապա-
լարըն մէմալիքի օսմանիւտէ էմ-
լաք սաթըն ալմալարըն գաննուէն
մէնն օլտըմը տըր :

— Էլիւրէն էլան՝ Լիբանանս
նասպ օլտընաճազ բրէնս իշիւն՝ պէ-
յիւրէրնտէ ի թիւրաթի հասըլ իտէ-
մէմիւրէն տիր : Պու տէրէնէ ու-
ֆազ պիր մէսէլէտէ տէքիթիւրի
ի թիւրաթիս իտէմէտիւրէն Սուլ-
թանը շըմարթմազտա օլտալ, սա-
յիր խուսուսլարտա տալիս անա
ճէսարէթ վերմիշ օլտըղիս :

— Արշիտիւք Նիքօլէպիշին
Շըպազտան ալտէթիւրն վարնա-
տան կէչուպ Սուլթանը զիյարէթ
իտէնէկի Սթանպօլտան պա թէ-
լէկրաթի պիտիւրիւմիշ տիր :

— Տէօրտ առէտ րուս թօրթի-
լէօրէրն Չանազալէ պօղազըն-
տան կէչմէլէրինէ մէզուկիւթ վէ-
րէն իրատէ նէշը օլտընա. ֆազաթ
մէզքիւր վարօրլարտա հիշ պիր սի-
լաշ վէ աօքէր պուլընմալաճաղըն-
տան մաաաա, թիւճարիյէ պան-
տէրաթը իլէ 24 սաաթտա պիրէր
պիրէր կէչմէլէրէ :

— Մըսըր խտիվի Ապպաս Հիւմի
բաշա ճուսա էրթէսի կիւնիւ էվ-
րոքա գապիլմէլէրին տէն շըմէնտը-
ֆէրլէ Սթանպօլա եթիւրալ, Եւլտըզա
կիթմիշ, վէ օրաաա Սուլ-
թան իլէ թաաա ի թալիս տէն սօնրա
վալիտէսինն զօնաղընա էնմիշ
տիր :

— Սթանպօլտա կէչէն կիւն եու-
մուրճազ իլլէթինէ թուլթուլմուշ
օլտն խապթա րուս խապթա հա-
նէսինտէ թէտալի օլտնազտա վէ
անըն տիւքեանը գաբանուպ, րէ-
ֆիդիւրի տալիս մուհաֆազա ալ-
թընա ալընմըլար տըր :

— Սթանպօլտան Բարիզէ գա-
չուպ, էշխասը մուզիւրէ (՝) կիրու-
հընա կիրմիշ օլտազ թէօնմէթի իլէ
Ճէլալ Շէվքէ պէյին ալէհինէ իսթի-
նաթ միւտտաի ումուսիսի թարա-
ֆընտան պիր իսթարնամէ նէշը
օլտընալ, մէրգուս 10 կիւնտէն
ալտէթ ի թալիս իսէ՝ մուհաթէմէսի
զըյապէն իճրա օլտնարազ, էմլաք
վէ էշխասը գապիլմէ՝ հուգուգը մէ-
տէնիյէտէն իսգաթ օլտնաճազ
տըր :

— Սէլանիքտէն Սեպտ. 22 թա-

րիւրի թէլէրաթիւէ աթիտէքի պիւ-
տիւրիւմիշ տիր :

«Իւսթիւպտէն Միթրօվիցայա
կիտէն շըմէնտըքէր խաթիւր իքի
եթրտէն քէսիւմիշ վէ պօղուլմըշ
տըր : Տէմիւրէրի շըգարուպ գուլ-
լանըմալաճազ տէրէնէյէ կէթիւ-
միշէր :

«Միւթէճասըլարը Արնապուտար
գանն օլտընալ. զիրա պուլար
Միթրօվիցայա րուս գօնսօլաճա-
նէսինն թէսիսինէ գարշը բրօ.
թէսթ ի թալիս օլտալ, պու եօլտա
պիր նիւմալիշտէ տալիս պուլընմըշ
օլտալիւրէր :

ՏԱԽԻԼԻՑԷ

Էվլէտէն օլտնա իլանաթ իւզ-
րէ, բէրշէպէ կիւնիւ շէհրիմիդին
հէր թարաթը րուս վէ պուլկար
պանտէրալարը իլէ թէքիւն օլտն
մըշ ըտը : Սաաթ 2 րաաալէ.
րինտէ րուս զըրհըսընըն իլիմա.
նըմըզա կիրմէսի թօր սէտալարը
իլէ իսպար օլտնալ : Էհալի խընճա
խընճ եթնի իսթէլէյէ եազըն գուս.
լուգտա թօրլանմալա պաշտը.
իսթէլէտէն՝ մուվազաթ եազըմըշ
օլտն գաբուլա գաաաթ՝ եթրէր խա-
լիւր իլէ տէօնէն իշ իտի : Սաաթ
5 սուլարընտա Ֆէլ. Բրէնս Ֆէր-
տինանտ արշիտիւք Նիքօլա իլէ
գալըգտան իսթէլէյէ շըգարուար.
քէզա տիկէր պիր չօգ զապիլմէր
պաշազ գալըգալըն գաբալա էն.
տիւրէր :

Րուս գօնսօլաճազ զէքէսի վէ
պազը գաաաթիւր շիշէք տէմէթ.
լէրի (պուլքէթ) վէ թուզ վէ էթէթ
թազտիմ ի թալիւր. վարնա էհա.
լիսի վէ պազը շիթէթլէր թաաա.
ֆընտան նուլթալար իրաա օլտնալ-
լար : Եարըմ սաաթ գաաաթ նուլթա-
լար վէ վէտալաշմազար տէվաթ
ի թալիս տէն սօնրա Բրէնս Արշի-
տիւք վէ տիկէր միսաֆիւրէր հա-
զըր պուլընա թըրէնի մալսուսա
րազիպ օլտըլար : Թըրէն սաաթ
6տա շէքիւրի :

Պու մինասիպէլէ 4 սաաթ
միւթէմաթիւն ալըզ օլտաա սօ-
վուգ րիւզկեարըն գարշըսընտա
պէքէլմէքտէ օլտն 5-600 մէթէպ
գըլալար վէ շընուգալար վէ 2-3000
էհալի թիւթիւրէրէր վէ հիշ պիր
շէյ կէօրմէյէ մուվաֆազ օլտազ-
սըզըն կէրի տէօնտիւրէր :

ՍԵՐՊԻԱ

Պէլկրատտան Սեպտ. 23 թա-
րիւրի պիր թէլէկրաթի աթիտէքի
հապաաթիս վէրիյօր :

«Արնապուտար Սերպիա սինօ.
ընտան իշէրի կիրուպ, Գօրաօնիկ
նամ տալըն եազընընտա Սըրպա.
րապաճըլար իւզէրինէ աթէշ իտէ-
րէք հիւճիւմ ի թալիւր : Սըրպար-
տան իքիսինն էօլտիւրտիւր վէ
իւշիւ պէրապէր կէօթիւրտիւր :
Արնապուտար արապալարը վէ ի-
նէկիւրի տալիս զապիլ ի թալիւր :
Սինօր մուհաֆըլարը եթիւմէլէ-

րինտէ Արնապուտար գաշտըլար» :
— Իսթիւրազ մէսէլէսի եթնի-
տէն միւշքիւլաթա ուզրաաթ :

— Վիւքէլա րէյիսի Մ. Վուի-
շին իսթիւրա իտէնէկի րիւմալթ
օլտընալ. քէզա Բարիզ էլիսի Մ.
Նիքօլիշ իսթիւրա իտէնէք տիր :

Չ Ի Ն

Բէքինտէքի րուս էլիսի րուս
աթըրէրին Մանլուրիտան շէքի-
լէնէքիւրինն եթնիտէն վաա ի թալի-
ֆազաթ եազըլաճազ օլտն պիր
քէօրիւնիւն իսթիւրա պուլաաթն.
տան սօնրա շէքիւրէպիլմէքիւրինն
պէյան էլլէտի, զիրա մէզքիւր
քէօրիւրա աթըրէրին կէչմէսինն
մանի օլտըր ըմըշ :

— Սէրալտան սուտուր իտէն
պիր ֆէրման Նիւս-Չէնուկ վի-
լալթիւրնալ րսեանը պաաաթըմազ
իշին մէմուրալա էմիւրէր վէր-
աի : Մալիւմ օլտըղը իւզրէ, պու
եազըն Պօքսէրլէր Սէ Չուան ըս-
եանը էանաթընտա պիր չօգ Չինլի
կաթիւրիկէրի գաթիլ ի թալիւր վէ
վիլալթիւրն էն պէօլիւք Չանկ թու-
շէհրինն զապիլ ի թալիւր էթէրաթն-
տա ըտըլար :

Ասըլար մէզքիւր շէհրին Չանկ
ֆիւկ եօլուրն իհաթէ ի թալիւր
իտի : Շէհրի սօգալարընտա
գապիլա վուգու պուլտու վէ Չին
աթէրի աաալիշ իպգա ի թալի-
լէր : շէհրին գաբուլարը պու կիւ-
նէ գաաաթ գաբալը տըրլար. ա-
սըլարտան 14 քիշի իտա մօլտը-
լար :

Եթնի վալի վէ պիր եթնի գօ-
մանտան եօլա շըգարըլմըշ տըր-
լար : Ֆրանսա վէ Ամերիկա էլի-
լէրի աճէլէ սուրէթտէ իգթիւրաթ-
նըն իճրաաթըն Չին սէրալտան թա-
լէպ իտէյօրլար :

ՄԻԻԹԵՆԷՎԻԹԷ

Օտէստա էլան թէհիլթէրի խա-
թալըգ էսթրէրի միւշաշէտէ օլտն-
տըղընտան, Բուսանիա հիւքիւմէ-
թի Օտէստան կէլէնլէր իշին պէշ
կիւն գաաաթիւրնա գօյմուշ տըր :

— Ֆրանսա վիւքէլա րէյիսի Մ.
Գօմպ եթնի պիր նուլթա իրաա ի-
տէրէք, հարալիյէ վէ պահրիյէ
նազըլարըն մուհաթէպէ գօրգուսը
վէրէն նուլթալարըն թէնէրիինն
զըրմալա չալըշմըշ վէ տէմիշ տիր :
«Ֆրանսա հիւքիւմէթի տիկէր տէվ-
լէթլէր իլէ տօթլըղընա տէվաթ
ի թալիւր վէ տաճա զիյաաթ գապիլէշ-
տիրմէք արղուսընտա տըր» :

— Վիւննտա Աստրիանըն Լէն-
տէրպանք նամ ճէսիմ պանգանըն
իքինճի գաթիւրի Էտուարտ Լիւնէք
պէշ միւսօնա եազըն պիր ալըզ
պըրազու : գաշմըշ տըր : Ֆազաթ
պու ճէսիմ մէպալտան 3,700,000
գուրօնը սալիւր պանգալարա պը-
րազմըշ օլտըղընտան, տալը ալըզ-
տա գալան պիր պուլուգ միւսօնա
եազըն պիր մէպալա տըր : Էլիւնէ-
քին թէլէթի նէֆա ի թալիւր օլտըղը

պէօլլէնլիյօր : Մէզքիւր պանգա-
մէրգուսըն եթրինն պիտիւրինն 1,000
գուրօն վէ էօլիւսինն պուլանա
500 գուրօն պալիւշ վաա ի թալիւր
տիր :

— Բուսանիա հիւքիւմէթիինն
Եազուտիւրէ գարշը իսթիւրա ի թա-
մէքտէ օլտըղը թէտապիւրլէրին թա-
թիւր իշին Մ. Ամերիկա րէյիսի
վէ ինկիւրիւք տէվլէթի՝ տիկէր տէվ-
լէթլէրին տըգգաթընա տալէթլէ՝
շու ֆազիւր էհալինն իսթէնէսինն
նիհալթ վէրիլմէսինն արղու պէ-
յան ի թալիւր :

ԹԻԻԽՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 13 Սեպտեմբեր
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալիս Լիպ. 57-58 հ.թ. 8.50/ 9.20	
Արապա Լիպ. 53-62 հ.թ. 7.20/10.20	
ԱՐԲԱ,	
Վալիս 100 քիւ 9.10/ 9.20	
Արապա 45-50 լիպ. հ.թ. 5.20/ 5.80	
ՉԱՎՏԱՐ	
Վալիս 53 54 լիպ. 6.80/ 6.90	
Արապա 7.- / 7.20	
ՐԱԲԻՑԱ, 100 քիւ 19.20/19.30	
ՅԱՍՈՒԼԻԱ, 100 քիւ 14.- /19.-	
ԵՈՒԼԱՅ	
Վալիս 100 քիւ 10.- /10.20	
Արապա հ.թ. 5.20/ 5.60	
Կիւնտէ 700-800 արապա վէ 25-30	
Վալիս կէլմէքտէ տիր :	
Վալիս մուսմէլէսի ալթուս ֆը- րանլէ, արապա կիւմիւլէ : Նաթօ- լէօն 21 ֆրանք :	

ԲԱՄՈՒՔ

Վարնա մաղազալարընտա իւրիւք սա- թըլարը :	
Ինկիւրի իւրիւրի 7. 8-14 10.-	
» » Ն. 18-24 12.20	
Եթրի իւրիւք Ն. 8-14 9.60	
Աթըլմըշ բամուք հօրդա 1.80	
Բամուկ ֆիլաթարը Եիւքսէլմէք- տէ տիր :	

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա բիպաաթընտա պազալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալ- թուս ֆրանք իլէ :	
ԳԱՆՎԷ 1.55/1.80	
Շէֆէր Նէմքէ 52	
» (Բէսմէ) սանտըգ 29.-	
Բիւրիւճ ճաթն չուլալ 37.- /-.-	
» Ֆիլիպէ » 34.- /-.-	
» Ինկիւրի » 25.50	
» Բիգօն » 52.-	
ԿԱՉ Սանտըղը 6.90	
Չէթիւր ԵԱՂԷ քիւ - .80/ -.95	
ԵՈՒՄՈՒՐԱ, 100 տէտ 5.20/ 5.40	
ԳՈՒՐՈՒ ԻԻՉԻՄ - .30	

ՍԱՐԱՖԻՑԷ

Նաթուրն 20.50 ֆրանք	
Օսմ. լիբաա 22.80 ալթուս ֆրանք	

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ

ՉԱԽ ԲԱՆԱՔՈՒ

«Վալիս» գերասանական խուճը
վաղը գիւր առաջին անգամ ըլլալով
պիտի ներկայացնէ ի նպատակին
կասակերգակ եւ տնօրէն Պ. Աթանաս
Վալիս «Թափառական Հրայ» բանտ-
միմ 7 արար 18 պատկեր եւ զարդա-
րուն տեսարան :

«Աշխոյժ Երիտասարդը» կամ «Իպիւշ
աղալին անճշտութեամբ» խիստ ծի-
ծաղալար կասակերգակ թիւն 4 արար :
Երգեր եւ պարեր :

Վալիսի խուճը

Одговорникъ Н. Драгулевъ
Чел. на Хр. Н. Войниковъ—Варва